

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ

ОБРАЗОВАНИЕ И НАУКА В АРЦАХЕ

1-2, 2009

Գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական
սովորողների և ուսուցիչների համար

Հիմնադիր՝ ԼՂՀ կրթության և գիտության նախարարություն

Научно-методический и научно-популярный журнал для учащихся и учителей

Учредитель: министерство образования и науки НКР

Գլխավոր խմբագիր՝
Ռ. Մարտիրոսյան
Պատասխանատու խմբագիր՝
Կ. Աթայան
Խմբագրի տեղակալ՝
Մ. Մինասյան
Պատասխանատու քարտուղար՝
Ս. Մայիլյան
Խմբագրական կոլեգիա՝
Աբրահամյան Ա.
Աբրահամյան Հ.
Ասրյան Ս.
Աղաբաբյան Լ.
Աղուզումյան Ռ.
Ապրեսյան Մ.
Բարսիսանյան Ա.
Բարսեղյան Վ.
Բաղդասարյան Գ.
Գրիգորյան Հ.
Գրիգորյան Ս.
Չոլյան Ս.
Զիլֆուղարյան Մ.
Թավադյան Լ.
Խաչիյան Է.
Խաչատրյան Մ.
Խաչատրյան Վ.
Կիրակոսյան Ա.
Կարապետյան Վ.
Հայրապետյան Ս.
Ղազարյան Է.
Ղազինյան Գ.
Ղուկասյան Ա.
Մաղալյան Վ.
Մանասյան Ա.
Մանուչարյան Հ.
Մելքումյան Ս.
Մովսիսյան Ա.
Ներսիսյան Լ.
Ներսիսյան Ա.
Շեկյան Լ.
Պետրոսյան Լ.
Պետրոսյան Լ.Ն.
Մարգարյան Հ.
Մաղյան Ա.
Միմոնյան Ա.
Մովսիսյան Յու.
Տեր-Մինասյան Ա.
Զամալյան Օ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ СОДЕРЖАНИЕ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ УЧЕБНО-МЕТОДИЧЕСКОЕ

Ֆիզիկական մեծությունների և հասկացությունների սահմանումները դպրոցական դասընթացում *Ս. Մայիլյան, Գ. Գրիգորյան*.....4-7
 Определение физических величин и понятий в школьном курсе
С. Майлян, Г. Григорян

Բառային և կառուցվածքային փոխառությունները ժամանակակից հայերենում *Լ. Մելքոնյան*.....8-14
 Заимствования слов и конструкций в современном армянском *Л. Мелконян*

Օտար լեզվի ուսուցման գործընթացում գեղարվեստական գրականության դասավանդման ինտերակտիվ մեթոդի որոշ առանձնահատկություններ *Ա. Մինասյան*.....15-18
 Некоторые особенности интерактивного метода преподавания художественной литературы в процессе обучения иностранному языку
А. Минсян

Աշխարհայացքային գաղափարների համակարգը հանրակրթական ուսումնական հաստատություններում բնագիտական առարկաների դասընթացում *Ս. Միսակյան*.....19-22
 Система мировоззренческих идей естественноведческих дисциплин в общеобразовательных учебных заведениях *С. Мисакян*

Վերադարձնող ուժի որոշմամբ տատանումների վերաբերյալ խնդիրների լուծման մեթոդի մասին *Լ. Պետրոսյան*.....23-27
 О методе решения задач по колебаниям с помощью определения возвращающей силы *Л. Петросян*

Հայեցի կրթությունը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում Ռ.Մարգարյան, Ա.Թովմասյան.....28
 Патриотическое образование в процессе обучения математике
Р. Саргсян, А. Товмасян

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ПЕДАГОГИКА, ПСИХОЛОГИЯ

Նագարեթ Տաղավարյանը մանկավարժ *Ա. Արրահամյան, Մ. Մանուկյան*.....129-136
Назарет Тагаварян – педагог *А. Абраамян, М. Манукян*

«Բյուզանդական արքունիքի» սինդրոմը խմբային ժամանակակից տեսությունների ներքո
Ռ. Աղուզումցյան, Գ. Հայրապետյան.....137-141
Синдром “Византийского двора” в свете современных теорий групп *Р. Агузумцян, Д. Айрапетян*

Հայաստանի և Անգլիայի հանրակրթության կառավարման համեմատական վերլուծությունը
Ա. Գաբրիելյան.....142-147
Сравнительный анализ управления образованием Армении и Англии *А. Габриелян*

Մտածելու կարողության խթանումը և գնահատումը դասապրոցեսում *Ա. Եկմալյան Է. Հայրապետյան*.....148-150
Стимулирование и оценка умения мыслить в учебном процессе *А. Екматаян, Э. Айрапетян*

Ընթերցողական կարողությունների դերը կայացած քաղաքացի ձևավորելու գործում *Մ. Հովհաննիսյան*.....151-153
Роль читательских умений в деле формирования гражданина *М. Ованнисян*

Ուսանողների բարոյական արժեքների ձևավորման առանձնահատկությունները *Ա. Սարգսյան*.....154-157
Особенности формирования духовных ценностей у студентов *А. Саргсян*

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ПОЛИТОЛОГИЯ, ЮРИСПРУДЕНЦИЯ, ЭКОНОМИКА

Հրեական և Հայկական հարցերի համեմատական վերլուծություն: Թեոդոր Հերցլի տեսությունը
Ա. Ազարյան.....158-163
Сравнительный анализ Еврейского и Армянского вопросов. Теория Теодора Герцля *А. Азарян*

Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Չալալյանի դերը Ղարաբաղի հայության
հասարակական-քաղաքական կյանքում *Ն. Բաղդասարյան*.....164-168
Роль Митрополита Багдасара Асан-Джалалаяна в общественно – политической жизни армян
Карабаха *Н. Багдасарян*

Քաղաքական գերիշխանության լեգիտիմության հիմնախնդիրը կերպավորված
հասարակություններում *Հ. Մովսիսյան*169-174
Проблема легитимности политической гегемонии в видоизмененных обществах *О. Мовсесян*

18-րդ դարի 80-ական թվականներին Արցախում սկիզբ առած ազգային-ազատագրական պայքարի
առաջնորդ, Գանձասարի կաթողիկոս Հովհաննես Հասան-Չալալյանը *Մ. Հասան-Չալալյան*.....175-179
Католикос Гандзасара Иван Асан-Джалалаян-лидер армянского национально- освободительного
движения, начатого в 80-ые годы XVIII века в Ариaxe *С. Асан-Джалалаян*

ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐ
ОЛИМПИАДЫ

Շուշիի ազատագրման 16-ամյակին նվիրված համահայկական II օլիմպիադան
Մ. Պետրոսյան, Տ. Սարգսյան.....180-186
Всеармянская 2-ая олимпиада, посвященная 16-летию освобождения Шуши *С. Петросян, Т. Маркарян*

ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ЖУРНАЛИСТИКА

«Գենդեր և լրագրություն» առարկայի դասավանդումը. մեթոդական խնդիրներ
Ն. Սարտիրոսյան, Ա. Մենենջյան.....187-190
Преподавание предмета: “Гендер и журналистика” вопросы методики *Н. Мартиросян, А. Менемсян*

ՄԵՐ ՕՐԱՅՈՒՅՑԸ
НАШ КАЛЕНДАРЬ

Մ. Մ. Մխիթարյանի ծննդյան 70-ամյակի առթիվ.....191
К 70-летию *С. М. Мхитаряна*

«ԲՅՈՒՉԱՆԴԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻ» ՍԻՆԴՐՈՍԸ ԽՄԲԱՅԻՆ
ԺԱՍՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔՈ

Ռ. Աղուզումցյան, Գ. Հայրապետյան
Երևանի պետական լսարան



Մենք ապրում ենք սրընթաց զարգացող աշխարհում, ուր մարդկային գործունեության առավելագույն արդյունավետության գլխավոր նախապայման է համարվում համագործակցությունը՝ համագործակցություն ինչպես միջամճնային, այնպես էլ ներխմբային և միջխմբային մակարդակներում: Սոցիալական հոգեբանության ավանդական խնդիրներից եղել և մնում է փոքր խմբերի հիմնահարցը՝ նրանց ձևավորումը, գործառնումը, զարգացումը և այլն: Եվ չնայած փոքր խմբերի հանդեպ գիտնականների օրեցօր ավելացող հետաքրքրությանը և տեսակետների ու հետազոտությունների բազմազանությանը, փոքր խմբերի խնդիրը մինչ օրս էլ մնում է հոգեբանական գիտության մեջ ամենավիճարկելիներից մեկը:

Հոգեբանական մտքի զարգացման այս փուլում փոքր խմբերի հիմնախնդիրն առավել ինտենսիվ սկսեց ուսումնասիրվել կառավարման հոգեբանության շրջանակներում՝ հիմնական կիզակետն ունենալով նրանց արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը: Այս տեսանկյունից մեզ համար առավել հետաքրքրական է Բ. Ս. և Ս. Բ. Չուրյումովների կողմից 2007թ. առաջարկված «Բյուզանդական արքունիքի» սինդրոմի քննարկումը՝ վերջին մեկ տարում առաջ քաշված առավել արդիական այլ տեսությունների և առկա հիմնախնդիրների շրջանակներում:

Սրա համար նախ և առաջ ներկայացնենք «Բյուզանդական արքունիքի» սինդրոմի հիմնադրույթները: Ըստ հեղինակների՝ այն խոցում է նախ և առաջ շատ հաջողակ խմբերին: Փոփոխությունների պայմաններում խմբային գործունեությունը դառնում է խոցելի, քանի որ ղեկավարությունը կորցնում է համապատասխան հակազդեցության ընդունակությունը: Հաղթող է դառնում փոփոխությունների վրա հենվողը:

Հիմնական խնդիրը սկսվում է դեռ խմբի ձևավորումից, երբ նախաձեռնողի շուրջ սկսում են հավաքվել այն մարդիկ, ովքեր ցանկանում են փոխել իրենց կյանքը:

Փաստորեն, արդյունավետ խմբի ձևավորումն ի սկզբանե հենվում է փոփոխությունների դրդապատճառայնության վրա: Համաձայն ամերիկյան վիճակագրության՝ կազմակերպությունների 80%-ը քայքայվում է առաջին երեք տարիների ընթացքում: Որո՞նք են տվյալ դիմամիկայի հիմնական գործոնները:

- **Հետաքրքրությունների տարամիտում.** կորում է «բացասական» դրդապատճառայնությունը և առաջ է գալիս «դրականը»: Յուրաքանչյուրը խմբում փորձում է օգտագործել իրեն տրամադրված հարստանալու, ֆինանսական անկախության, կարիերայի հնարավորությունները: Այսպիսով՝ կենտրոնամետ, միավորող «բացասական» դրդապատճառայնությունը նվազում է և աճում է կենտրոնախույս «դրականը»:

- **Իշխանության պայքար.** լիդերության խնդիր թիմում չի լինում, քանի դեռ ղեկավարը փորձում է գտնել գումար և ներդրումներ: Իրավիճակի փոփոխության հետ նվազում են ռիսկերը, և ղեկավար լինելը հեղինակավոր է և օգտակար:

- **Արժեքային համակարգի փոփոխություն.** թիմում առաջանում են լարվածության աղբյուրներ, քանի որ խմբի անդամներից յուրաքանչյուրն ունի սեփական պատկերացումն իր զբաղեցրած դիրքի, արտոնությունների և այլնի վերաբերյալ:

Փաստորեն, ըստ տեսության հեղինակների, խմբում տեղի են ունենում հետևյալ փոփոխությունները.

- սկզբում գնահատվում էր թիմային, հիմա՝ անհատական հաջողությունը,

- սկզբում գնահատվում էր նվիրվածությունը, իսկ հիմա՝ պրոֆեսիոնալիզմը.
- սկզբում գնահատվում էր հավասարությունը, իսկ հիմա՝ կարգավիճակը:

Այսպիսով, իրավիճակը դառնում է հակասական, քանի որ հաջողությանը զուգընթաց համակարգը դառնում է անկայուն և հեշտ փլուզելի:

Ըստ «Բյուզանդական արքունիքի» սինդրոմի՝ կազմակերպության քայքայումը տեղի է ունենում հետևյալ փուլերով.



- սկզբում քայքայվում են վստահության ցանցերը,
- ազդեցության ցանցերը, լինելով առավել ամուր, քայքայվում են ավելի ուշ, սակայն վերականգնման ենթակա չեն,
- կողմերը փորձում են կայուն հարաբերությունների տպավորություն ստեղծել,
- իշխանության ճգնաժամ, որից ոչ ոք ապահովագրված չէ:

Սա անխուսափելիորեն առաջ է բերում հաջորդ հարցադրումը: Ինչպե՞ս ճանաչել «Բյուզանդական արքունիքի» սինդրոմը կազմակերպությունում:

Այն ուղեկցվում է մի քանի ախտանիշներով.

• **Անտարբերություն:** Ցանկացած կազմակերպությունում ղեկավարի հանդեպ անտարբերությունը, ինչպես նաև խաղացվող էնտուզիազմը նկատելի է առաջին իսկ հայացքից:

• **Խմբի հոգեդինամիկան:** Ցանկացած խմբում կարող ենք հանդիպել հետևյալ պատկերին.

«Զգված նետեր» - հաջողության հետ միասին առաջանում է հավատ սեփական ուժերի հանդեպ, հավատարմություն լիդերին, անձնագոհություն գործի հաջողության համար:

«Բյուզանդական արքունիք» - մոնոլոգական ասացվածքում ասվում է «Դժբախտությունը, որը միավորում է, ավելի լավ է այն հաջողությունից, որը բաժանում է»: Հստակ նպատակի կամ արտաքին վտանգների և թշնամիների բացակայությունը թույլ լիդերի ֆոնին խմբում առաջ են բերում տարածայնություններ: Ըստ էության, թիմ արդեն գոյություն չունի:


«Խառնաշփոթ» - այս պահին էլ խմբին հասցվում է ուժեղ արտաքին հարված: Սկսվում են մեղավորների որոնում, փոխադարձ մեղադրանքներ, իսկ ղեկավարությունը լուռ է:

«Հուսի ձևավորում» - եթե խումբը միանգամից չի քայքայվում, ապա հոտային բնագործի ազդեցությանը սկսվում է համախմբում լիդերի կողքին, որը կարող է լինել ինչպես ղեկավարը, այնպես էլ նա, ով պատրաստ է խմբին դուրս բերել ճգնաժամից: Գոյատևման ցանկությունն առժամանակ բերում է կոնֆլիկտների հարթմանը:

«Հեղաշրջման նախապատրաստում» - երբ շատերին է պարզ դառնում վիճակի անելանելիությունը, ելքը սկսում է համարվել միայն իրավիճակի արմատական վերափոխումը:

«Փախուստ նավից» - բանակցությունների անհաջողության պարագայում սկսվում են «ռեպրեսիաներ», կարևոր մասնագետների փախուստ, քայքայում:

Հեղինակներն այս գործընթացները պատկերում են համապատասխան գծապատկերի ձևով (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Խմբում տրամադրությունների փոփոխման դինամիկան

Հիմնական վտանգը լիդերի հեղինակության և անդամների՝ իրենց գործի հանդեպ հավատի կորուստն է:

Այս իրավիճակի հաղթահարման հեղինակները մի քանի խորհուրդներ են տալիս խմբի լիդերներին.

- խստացնել կարգուկանոնը և հենվել վախի վրա, ցուցադրաբար պատժել խուճապահարներին,

- խմբին ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ բանբասանքների փոխարեն,

- ցուցադրել հանգստություն, բացարձակ հավատ սեփական ուժերին,

- մարդկանց գործով զբաղեցնել, ուղղորդել նրանց էներգիան դեպի աշխատանքը,

- լիդերությունը պատվիրակայնացնել՝ ստեղծելով միջանկյալ դեկավարման և որոշումների որոնման խմբեր:

Այսպիսին էր «բյուզանդական արքունիքի» սինդրոմի տեսությունն ըստ նրա հեղինակների: Մակայն, ինչպես նշեցինք, կառավարման հոգեբանության ոլորտում վերջին մեկ տարվա սրընթաց զարգացումները բացահայտում են այս տեսության թույլ կողմերը և մասնագետների ուշադրությունն առավելապես ուղղորդում դեպի ճգնաժամի հաղթահարման գործընթացները՝ դեռևս խմբի ձևավորման առաջին իսկ օրերից: Ընդ որում՝ հակաճգնաժամային որոշ միջոցառումների արմատները դեռևս գտնվում են սոցիալական հոգեբանության ակունքներում: Միայն դրանց նորովի վերաիմաստավորումը և ընդգրկումը նոր համատեքստ կտան արդյունավետ լուծումներ:

Համառոտ անդրադարձ կատարենք վերոհիշյալ դրույթներին՝ դուրս բերելով ոլորտի մասնագետների համար առավել կարևորները:

Սոցիալական հոգեբանությունում արդեն մի քանի տասնամյակներ շարունակ ուսումնասիրվում են տարբեր խմբային էֆեկտներ, որոնցից յուրաքանչյուրը որոշակի ձևով ազդեցություն է ունենում խմբի ստեղծման, կենսագործունեության, ինչպես նաև քայքայման գործընթացների վրա: Առանձնացնենք դրանցից մի քանիսը, որոնք, ըստ մեզ, էապես կարող են թույլ տալ հաղթահարելու «բյուզանդական արքունիքի» սինդրոմը:

- **Խմբային պատկանելիության էֆեկտ:** Այն բացահայտվել է դեռևս 1908-ին Մակ-Գուգայի կողմից: Այստեղ շատ կարևոր է առանձնացնել և ուշադրություն դարձնել նրա երեք հիմնական բաղադրիչներին՝ կոգնիտիվ, հուզական, վարքային: Շատ հաճախ խմբերում

պատկանելիության զգացումը կրում է միայն կոգնիտիվ կամ հուզական բաղադրիչները, և շատ հազվադեպ՝ վարքային: Ընդ որում, այն բաժանվում է երկու հիմնական ուղղությունների՝ մասնակցության և հուզական աջակցության: Առաջինի հիման վրա ձևավորվում է խմբային արդյունքների պատասխանատվության զգացում, իսկ հուզական աջակցություն շատնալու պարագայում խաթարվում է «մենք»-ի զգացումը, որը, որպես հետևանք, ծնում է խմբի հանդեպ «նրանք»-ի զգացումը: Սրա համար խմբում անհրաժեշտ է միշտ արթուն պահել «ուրիշի» հասկացությունը և մշակել այդ «ուրիշի» հետ վարվելու միջև իսկ վարքային նորմերը:



• **Ռինգելմանի էֆեկտ:** Բացահայտվել է Մաքս Ռինգելմանի կողմից և ցույց է տալիս, որ խմբի յուրաքանչյուր միավորով մեծանալու պարագայում ամեն մեկի ներդրումը խմբի ընդհանուր գործունեության մեջ նվազում է: Սա ապացուցվում է նաև պրակտիկայում, երբ փոքր խմբերն առավել ամուր են, իսկ մեծանալուն զուգընթաց գնում են քայքայման: Սրա ելքն այն է, որ խմբային գործունեության ոլորտների զարգացմանը զուգահեռ մեծ խումբը ֆունկցիոնալ մասնատվի ավելի փոքր խմբերի:

• **«Ճախարակի» էֆեկտ:** Այն խմբային հուզական սթենիկ և ասթենիկ վիճակների շրջափուլային հերթափոխությունն է: Ընդ որում, հերթափոխության ժամանակը և յուրաքանչյուր վիճակի տևողությունը կախված է մի քանի գործոններից՝ օրվա ժամանակ և շաբաթվա օր, խմբի հոգեբանական կառուցվածքի առանձնահատկություններ, փոխհարաբերությունների համակարգ: Այս հերթափոխությունը անպայման պետք է հաշվի առնվի դեկավարի կողմից, քանի որ շատ հաճախ խմբի հուզական ասթենիկ փուլում տրվում են սթենիկ հուզական երանգավորում պահանջող առաջադրանքներ և խնդիրներ, ինչն էլ առաջ է բերում գիտակցաբար չբացատրվող «մերժման» էֆեկտ:

• **«Միներգիայի» էֆեկտ:** Սա ցանկացած խմբային աշխատանքում դեկավարի համար ամենացանկալի արդյունքն է: Այն այլ կերպ անվանում ենք բազմապատկական էֆեկտ: Թվային ձևով այն արտահայտվում է որպես 1-1>2: Սա իր արտահայտումն է գտնում ինտելեկտուալ ոլորտում: Այս էֆեկտի շնորհիվ բարձրանում է խմբի դիտողականությունը, խնդիրների լուծումը, երևույթների ընկալումն ու գնահատումը:

Հոդվածի ավարտին ներկայացնենք ֆիզմաթ. գիտությունների դոկտոր Վ. Դ. Մոզիլևսկու մի քանի մեթոդական ցուցումներ՝ ուղղված խմբային համակարգերի կայունության ապահովմանը:

1. *Կառուցելով համակարգը՝ անհրաժեշտ է հոգալ նրա սահմանափակվածության մասին, եթե նույնիսկ վերջնական նպատակը լայն ոլորտներում ազդեցություն ունենալն է: Սահմանի բացակայությունը ոչ թե ապահովում է շփումների լայն շրջանակ, այլ միայն աղճատում համակարգը, այն դարձնում դժվար դեկավարվող:*

2. *Համակարգի վերլուծության ամենատեղեկատվական ցուցանիշը շարժունակությունն է: Հետևաբար, կազմակերպության գործընթացների դինամիկան պետք է շարունակ գտնվի դեկավարության հետևողական դիտարկման կիզակետում:*

3. *Նպատակադրման ժամանակ գերադասելի է տվյալ ժամանակահատվածի համար սահմանափակվել փոքրաթիվ պահանջներով: Սա թույլ կտա պարբերաբար դեկավարել համակարգի զարգացման դինամիկան, իրականացնել համապատասխան շտկումները:*

4. *Հիերարխիկ կառույցի կազմակերպման ժամանակ արդյունավետ է յուրաքանչյուր մակարդակի համար սահմանել նրան համապատասխան նպատակը, արդյունավետության չափորոշիչները, պատասխանատվության սահմանները, առանձնացնել ռեսուրսները: Հատուկ ուշադրության է արժանի տեղեկատվական հարցերի կազմակերպումը:*

5. *Նպատակահարմար է սահմանել համակարգի անվտանգության երկու մակարդակ՝ արտաքին և ներքին: Վերջինն իր մեջ ներառում է նաև համակարգի փոփոխականությունը:*

Ըստ էության, նկատում ենք, որ վերջին տեսությունների տեսանկյունից «Բյուզանդական արքունիքի» սինդրոմը դադարում է համարվել խմբի զարգացման անհրաժեշտ շրջափուլ՝ ընդ

որում նրանից կարելի է խուսափել խմբի ձևավորման առաջին իսկ օրերից ճիշտ սահմանելով խմբի՝ որպես համակարգի, ձևավորման և կենսագործունեության պայմաններն ու պահանջները:

Հարկ ենք համարում նաև նշել, որ վերլուծեցինք խմբի զարգացման վերջին մեկ տարվա ուսումնասիրությունները, իսկ խմբերի դինամիկայի ուսումնասիրությունները ինտենսիվորեն զարգանում են յուրաքանչյուր օր և ամիս: Հետևաբար, շարադրված տեսակետները ճշմարտացի և բավական արդյունավետ են միայն այս պահի համար, իսկ հետագա վերլուծություններն ու հետազոտություններն անհրաժեշտ են խմբի առավել կայուն կենսագործունեության ապահովման համար:



Գրականություն

1. Могилевский Вадим Дмитриевич - Методология систем, 12 октября 2007. http://www.elitarium.ru/2007/10/12/metodologija_sistem.html
2. Платонов Юрий Петрович - Групповые эффекты, 23 мая 2008. http://www.elitarium.ru/2008/05/23/grupповые_jeffekty.html
3. Чурюмов Б.С., Чурюмов С.Б. - Синдром «Византийского двора», 13/07/2007. <http://www.mybiz.ru/index.php?page=1762>

Синдром «Византийского двора» в свете современных теорий групп

Р.В. Агузумян, Д. Р. Айрапетян
Ереванский государственный университет

В статье обсуждаются вопросы формирования групп, актуальных в социальной психологии и психологии управления, а также динамические процессы, происходящие в этих группах. Центральное звено статьи - это критический анализ синдрома “Византийского двора”.

На основе современных теорий, сделана попытка разработать психологический механизм во избежание данного синдрома.

“Byzantine Palace” syndrome in the framework of modern group theories

*R. V. Aghuzumtsyan, D.R. Hayrapetyan
Yerevan State University*

The issues of groups’ formation, actual in the area of social psychology and management psychology, as well as dynamic processes, taking place in these groups, are studied in this article. The main target of the article is the critical analysis of the “Byzantine Palace” syndrome.

Taking into consideration more modern theories, an attempt to work out the psychological mechanism to avoid this syndrome is made.